

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ  
«ԵՐԿԻՐ»  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ



# ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՆԱՐԱՐ ՊԱՅՄԱՆ

*«Եզերք» մատենաշար, թիվ 1*

Երևան 2006

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|   |    |
|---|----|
| Երկու խոսք .....  | 4  |
| Ա. Հայրենադարձություն. պատմաքաղաքական, ազգային<br>եւ բարոյական հիմնավորում .....                          | 6  |
| Բ. Դեպի Հայաստան հայրենադարձության գործընթացները<br>20-րդ դարում .....                                    | 10 |
| Գ. Հայրենադարձության ռեսուրսները .....  | 14 |
| Դ. Հայրենադարձությունը երկքաղաքացիության<br>համատեքստում .....  | 17 |
| Ե. Հայրենադարձության միջազգային փորձի մասին .....   | 19 |
| 2. Օրենսդրությամբ կարգավորվող հայրենադարձության<br>կազմակերպման հիմնական սկզբունքները .....               | 22 |
| 1. Հայրենադարձության ծրագիրը որպես պետական<br>եւ համազգային ծրագիր .....                                  | 22 |
| 2. Հայրենադարձությունը որպես Հայաստանի Հանրապե-<br>տությունը որակյալ մասնագետներով համալրելու միջոց ..... | 22 |
| 3. Հայրենադարձության ծրագրի մեկնարկի նախնական<br>հանգրվանները .....                                       | 24 |
| 4. Հայրենադարձության ձեւերն ու տեսակները .....  | 26 |
| 5. Հայրենադարձին տրվող արտոնությունները .....   | 27 |
| 6. Լեզու եւ դպրոց .....   | 28 |
| 7. Հայրենադարձի ՀՀ զինված ուժերում ծառայությունը .....  | 29 |



|  |    |
|--|----|
| 8. Հայրենադարձության պետական մարմնի<br>հիմնական խնդիրները .....            | 29 |
| 9. Սփյուռքի դերակատարությունը հայրենադարձության գործում                    |    |
| 10. Հայրենադարձությունն եւ տարաբնակեցում .....                             | 30 |
| 11. Հայրենադարձության ազգային ծրագրի<br>ֆինանսավորման խնդիրները.....       | 31 |
| Ե. Հայրենադարձության ազգային ծրագրին<br>սպառնացող վտանգները .....          | 33 |
| Ը. Հայրենադարձության ազգային ծրագրի<br>իրականացման կոչ .....               | 37 |
| <b>ՀԱՎԵԼՎԱԾ</b>  |    |
| «Հայրենադարձության մասին» Հայաստանի Հանրապետության<br>օրենքի նախագիծ ..... | 40 |



## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայրենադարձության եւ հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությունը «Հայրենադարձության մասին» օրենքի ընդունումն ու հայրենադարձության գործընթացի մեկնարկը համարելով Հայաստանի զարգացման հիմնարար երաշխիքներից մեկը՝ 2005 թվականի սեպտեմբերի 25-ին հրապարակեց բաց նամակ, որտեղ կոչ էր անում ընդունել հայրենադարձության մասին օրենք եւ մեկնարկ տալ հայրենադարձության ազգային ծրագրին: Նակական ուղարկվեց ՀՀ ազգային ժողովի նախագահին, նախագահի տեղակալներին, խմբակցությունների ղեկավարներին եւ տարածվեց մամուլով:

Բաց նամակին դրականորեն արձագանքեցին Ազգային ժողովի «Հայաստանի հանրապետական կուսակցություն» եւ «Օրինաց երկիր» կուսակցություն խմբակցությունները, որոնց ղեկավարներ՝ Գ. Սահակյանը եւ Ս. Բալասանյանը, «Երկիր» միության ներկայացուցիչների հետ առանձին հանդիպումների ժամանակ, պատրաստակամություն հայտնեցին սատարելու «Հայրենադարձության մասին» օրենքի մշակմանն ու ընդունմանը: Ի կատարումն հանդիպումների ընթացքում ձեռք բերված համաձայնության, «Երկիր» միությունը պատրաստեց եւ 2005թ. նոյեմբերի 1-ին ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը հանձնեց «Հայրենադարձության մասին» օրենքի նախագծի նախնական



տարբերակ:

Փորձաքննական ուսումնասիրության ենթարկելու նպատակով օրենքի նախագիծն ուղարկվեց «Նորավանք» գիտակրթական հիմնադրամին ու Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոնին: «Նորավանք» գիտակրթական հիմնադրամում կազմակերպվեցին օրենքի քննարկմանը նվիրված սեմինարներ, որոնց մասնակցեցին մի շարք փորձագետներ և գիտնականներ: Միաժամանակ, «Երկիր» միության հանձնարարությամբ իրավաբան Միշա Աղաջանյանն իրականացրեց «Հայրենադարձության մասին» ՀՀ օրենքի նախագիծի վերամշակմանն ու լրացման գործը: Օրենքի նոր տարբերակը գետեղում ենք սույն գրքույկի հավելվածում:

Հայրենադարձության և հիմնավորման «Երկիր» հասարակական կազմակերպությունների միությունը Հայաստանի և սփյուռքի հանրության ուշադրությանն է ներկայացնում սույն գրքույկը՝ նպատակ ունենալով հանրության հնարավորինս լայն շրջանակներին գիտակից դարձնելու խնդրի կենսական նշանակությանը Հայաստանի հետագա զարգացման համար:



# Ա.

## **Հայրենադարձություն. Պատմաքաղաքական, Ազգային և Բարոյական Հիմնավորում**

Հայկական լեռնաշխարհի հայաթափման գործընթացն ունի մոտ մեկ եւ կես հազարամյակի պատմություն: Արշակունյաց թագավորության բաժանումը, այնուհետեւ Բագրատունյաց հարստության եւ հայկական փոքր թագավորությունների ու իշխանությունների կործանումը, արաբների, սելջուկների, մոնղոլների ներխուժումները, նրանց մշտական ու ավերիչ բախումներն իրար դեմ, տեւական թուրք-պարսկական պատերազմները, թուրքական եւ քրդական ցեղերի զանգվածային ներգաղթն, ի վերջո, հանգեցրին Հայկական լեռնաշխարհի էթնոժողովրդագրական դիմագծի աղարտմանը եւ աշխարհասփյուռ հայկական գաղութների գոյացմանը:

Արդեն միջնադարում հայկական սփյուռքը վերածվեց մեր պատմության մշտական ուղեկցի ու հավելուկի: Արտագաղթը, հայրենալքությունը, պանդխտությունը, դարձան մեր պատմական ճակատագրի ողբերգական բաղադրիչն, ազգաքայքայիչ այն գործոնը, չամոքվող վերքը, որից մշտատեւ արյուն է ծորում: Երկիրը հայազրկվում էր պանդխտության ու զանազան չափերի ու ձեւերի բռնաձուլումների արդյունքում:

Հայկական լեռնաշխարհի հայաթափումն իր գագաթնակետին հասավ քսաներորդ դարի սկզբներին՝ Հայոց ցեղասպանության եւ նրան հաջորդած տարիներին: Խորհրդային ժամանակաշրջանում հայաթափության նախաձեռնությունն անցավ ադրբեջանցի թուրքերին ու վրացիներին, որոնք ստանձնեցին Արցախի, Ուտիքի, Նախիջեւանի եւ Հյուսիսային Գուգարքի հայաթափությունը լիակատար ավարտին հասցնելու գործը: 1988 թվականից առ այսօր, մանավանդ, Հայաստանի Հանրապետության իրավական եւ Արցախի փաստացի անկախացումից հետո, Թուրքիայի եւ նրա դաշնակից պետությունների կողմից Հայաստանի հայաթափության ծրագիրը շարունակվում է Հայաստանի շրջափակման, տարածաշրջանային հաղորդակցական եւ տնտեսա-



կան խոշոր նախաձեռնություններից մեկուսացնելու եւ այլ միջոցներով:

Հայաթափման այս քաղաքականության համադետային արդյունքները հայտնի են: 17-րդ դարում՝ գլխավորապես Արեւելյան Հայաստանի բնակչության բռնի տեղահանություն Շահ Աբասի կողմից, 18րդ դարում՝ Դաշտային Արցախի, Քաշաթաղի, Քարվաճառի հայ բնակչության արտագաղթ, 19-րդ դարում եւ 20րդ դարասկզբին՝ Արեւմտյան Հայաստանի հայության ցեղասպանություն, ողջ 20-րդ դարում՝ Ուտիքի, Արցախի մեծ մասի եւ Նախիջեւանի հայաթափում, եւ արդեն վերջերս՝ 1988-2004 թվականներին Հայաստանի եւ Արցախի շրջափակման, Ջավախքում վրացական կառավարության կողմից իրականացվող ըստ էության հակահայկական քաղաքականության արդյունքում՝ տարածաշրջանից շուրջ 1,5 մլն հայերի արտագաղթ: Այս «Նոր Սփյուռքը» գնաց կիսելու «Հին սփյուռքի» ճակատագիրն, ինչպես նաեւ ստեղծելու մի իրողություն, երբ ներկայումս մենք վերածվել ենք 70 եւ ավելի տոկոսով «սփյուռքյան» եւ միայն ու սոսկ 30 տոկոսով «հայաստանյան» հայության:

Ներկայիս Հայաստանի Հանրապետության եւ հարակից հայկական տարածքներից առայսօր շարունակվող արտագաղթն ունեցել է մի շարք խիստ բացասական հետեւանքներ, որոնց ազդեցությունը շարունակական է եւ ողջ ծանրությամբ զգացնել է տալու ապագա տասնամյակներում: Մասնավորապես, առանձնանում են հետեւյալ հիմնական միտումները.

Ա. Տղամարդկանց թվի շեշտակի նվազում, ինչը, համապատասխանաբար, պատճառ է դառնում ամուսնությունների եւ աճող ընտանիքների թվի կտրուկ նվազման:

Բ. Բնակչության, այդ թվում՝ աշխատանքային տարիքի, ծերացում, երեխաների թվի նվազում, ծնելիության անկում:

Գ. Պաշտպանունակության եւ ռազմական հզորության տկարացում: Այս տեսանկյունից խիստ բացասական հետեւանքներ ունի հատկապես սահմանային բնակավայրերից բնակչության արտահոսքը: Մտահոգիչ է նաեւ ազգային բանակ զորակոչվողների թվի նվազումը:

Դ. Մարդկային (զուգահեռաբար՝ նյութական) որակյալ ռեսուրսների արտահոսք, որակյալ աշխատուժի վերարտադրության բնականոն ըն-



թացքի, աշխատանքային տարիքի սերնդափոխության շղթայի օղակների խաթարում եւ այլն:

Արտագաղթողների արդեն երբեմն երկրորդ, ընդհանրապես՝ երրորդ, եւ առավելագույնը՝ չորրորդ սերնդի ավելի քան 95 տոկոսը կորցնում է իր ազգային դիմագիծը, դադարում հայ լինելուց:

Իհարկե, սփյուռքի գոյությունը որոշակի չափերի մեջ, կարող է օգտակար լինել տվյալ ազգի համար, բայց այն, որպես կանոն, չարիքի է վերածվում, երբ սփյուռքն ավելի մեծ թվաքանակ ու տարածում է ունենում, քան իր հայրենիքում մնացած բնակչությունը: Մշակութային ու բարոյական առումներով, եթե ոչ այլասերվող, ապա առնվազն՝ այլափոխվող սփյուռքն հետադարձ բացասական ազդեցություն է գործում իր հայրենաբնակ «փոքրամասնության» վրա, բացի այդ՝ եթե սփյուռքն ավելի հարուստ ու բարեկեցիկ է (ինչպես է մեր դեպքում), մասնիկ առ մասնիկ իրեն է քաշում բուն երկրի իր ազգակիցներին, մեծացնելով իր իսկ բացասական «տեսակարար կշիռն» ու տկարացնելով բուն Հայրենիքը: Տարագնացի, վտարանդու, պանդուխտի հոգեբանությունն ու կենսակերպն, ի վերջո, կարող են համազգային ախտի վերածվել, եթե, անշուշտ, դա դեռ չի կատարվել:

Ահագանգող են նաեւ Հայաստանում բնակչության ներքին տեղաշարժերի միտումները: Այդ գործընթացը թողնված է ինքնահոսի եւ ընթանում է դեռելս խորհրդային ժամանակներից հարթեցված ուղիով՝ տեղաշարժ գյուղական բնակավայրերից դեպի քաղաքային բնակավայրեր: Դրա հետեւանքով, Հայաստանի սահմանային ռազմավարական հատվածներից հազարավոր ընտանիքներ տեղափոխվում են մայրաքաղաք եւ մարզային կենտրոնական քաղաքներ: Թեեւ խորհրդային Միության փլուզումից հետո խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների անգործությունը պետք է որ տրամաբանորեն հանգեցներ դեպի քաղաք բնակչության ներհոսքի նվազմանը, սակայն, տեղի ունեցավ հակառակը՝ վերջին տասնամյակում գյուղական համայնքների դատարկումն ընդունել է էլ ավելի լայն ծավալներ: Արդյունքում՝ խիստ անհավասարակշռված է բնակչության տեղաբաշխումը հանրապետության տարածքի վրա: Ըստ պաշտոնական տվյալների Հայաստանի բնակչության 60 տոկոսից ավելին կենտրոնացված է Երեւանում եւ Արարատի, Արմավիրի ու Կոտայքի մարզերում: Մի շարք սահմանային բնակավայրեր (մասնավորապես, օրինակ, Կապա-



նի տարածաշրջանում), անգամ դպրոցներ չունեն եւ կանգնած են ան-  
հետացման եզրին:

Այս համադետային երեւոյթները, իրավիճակի ողջ ծանրությամբ  
հանդերձ, ցավոք, ազգի բոլոր մակարդակներում պատշաճ կերպով  
չեն գիտակցվում: Սա, գուցէ, այն պատճառով, որ խնդիրը չափազանց  
բարդ է եւ պահանջում է արմատական եւ համալիր լուծումներ:

**Արտագաղթի Հայաստանին պատճառած եւ պատճառելիք վնասնե-  
րը վերացնելու համար արդեն բավարար չեն բնակչության հետագա  
արտահոսքը խոչընդոտող միջոցառումները: Եկել է հայրենադարձու-  
թյան ազգային ծրագիր մշակելու եւ իրականացնելու ժամանակը:**



# Բ.

## **Դեպի Հայաստան Հայրենադարձության Գործընթացները 20-րդ Դարում**

Ներկայումս ձայներ են հնչում, որ արտերկրի մեր եղբայրներից սակավաթիվ անձիք են ձգտում հայրենադարձվելու, հայրենիքում օջախ ու հող ձեռք բերելու: Սակայն, նախընթաց փորձը ցույց է տալիս, որ հայրենադարձությունը նոր երեւույթ չէ: Հայ ժողովրդի շոշափելի մի խոշոր հատվածի իղձը միշտ էլ եղել է հայրենիք վերադառնալն, այստեղ հաստատվելը, հայրենիքին ծառայելը: Սփյուռքահայությունն իր այդ իղձը ձգտել է իրականացնել հայրենիքում տիրող քաղաքական, տնտեսական, ընկերային շատ ավելի վատթար պայմաններում, քան ներկայումս է: Ուստի, անհեթեթություն է, գանազան «փաստարկներ» վկայակոչելով, հայության կյանքում արդեն վաղուց խոր ու կայուն միտման՝ հայրենադարձության դեմն առնելու փորձը:

Արդեն 19-րդ հարյուրամյակում, հարյուր-հազարավոր հայեր, ռուսական զենքի՝ պարսկական ու թուրքական բանակների դեմ տարած հաղթանակների շնորհիվ համախմբվեցին Արեւելյան Հայաստանի մի մեծ հատվածում: Բայց այդ համախմբումը՝ «ներգաղթ», «հայրենադարձություն» համարելը սխալ է, մակերեսային ընկալում: Բանն այն է, որ հայերն Արարատյան աշխարհում ու հարակից տարածքներում համախմբվում էին Հայաստանի այլ տարածաշրջանների (Պարսկահայք, Բարձր Հայք, Տարոն, Վասպուրական, այլ) հայաթափման հաշվին, այսինքն նրանք այլ երկրներից չէ, որ ներգաղթում էին Հայաստան: Դա, թուրքական բանակների առաջխաղացքի ճնշման տակ եւ միջազգային հանրության մեղսակցության պայմաններում, հայրենիքի ներսում կատարվող ներքին տեղաշարժ էր:

Եթե «հայրենադարձություն» եզրը լատիներենից՝ հայերեն թարգմանաբար նշանակում է «վերադարձ հայրենիք», ապա հայերի «վերադարձն հայրենիք» եւ ոչ թե նրանց պարզ տեղափոխությունը Հայաստանի մեկ նահանգից կամ գավառից մեկ այլ նահանգ կամ մեկ այլ



գավառ, սկսվում է Հայաստանի Հանրապետության ստեղծման շնորհիվ: 1918 թվականին տեղի է ունենում իրոք որ պատմական նշանակության շրջադարձ. ավելի քան հազար հինգ հարյուր տարի արտագաղթող ժողովուրդը, ճիշտ է՝ համեմատաբար փոքր խմբերով, ճիշտ է՝ առանձին-առանձին, հայրենադարձվում էր:

Ընդամենը երեք տարվա ընթացքում (1918-1920 թվականներ) Հայաստանի Հանրապետություն տեղափոխվեցին այլ երկրներում ապրող ու աշխատող հազարավոր մտավորականներ, գինվորականներ, բժիշկներ, մասնագետներ, ազգային, հանրային գործիչներ, պարզ աշխատավորներ... Հայրենադարձության գործընթացն հենց այդ շրջանից դրսևորեց անշրջելիության հիմնահատկություն: Սեփական հայրենիք վերադառնալու, այնտեղ ապրելու, աշխատելու հայ մարդու ձգտումն այնքան էր խորը, որ անգամ երկրի բոլշեվիկյան բռնազավթումը, չնայած ներգաղթին եւս հասցրած լուրջ վնասին, չկարողացավ կասեցնել այն:

Շատ շուտով իրենք՝ բոլշեվիկներն, ստիպված եղան սատարելու հայրենադարձության մասնակի, թե զանգվածային գործընթացներին: Նրանք նույնիսկ ներգաղթի կազմակերպիչներ դարձան եւ ելնելով մի կողմից՝ ստեղծված կացությունից (հայության տարացրվածությունն ու դրա հետ միասին՝ հայրենիք վերադառնալու զանգվածային ձգտումներ) եւ, մյուս կողմից՝ սեփական նպատակներից, (Հայկական հարցը միջազգային ասպարեզում շահարկելու եւ այդ ուղիով Թուրքիային սանձահարելու եւ սփյուռքի հայության ներուժը թուլացնելու ցանկություններից մղված) ձեռնամուխ եղան անգամ մեծ ներգաղթի կազմակերպման Երկրորդ աշխարհամարտին անմիջապես հաջորդող տարիներին:

Եթե 1920-1940 թվականներին Խորհրդային Հայաստան էր ներգաղթել 75000 հայ, ապա 1946-47 թվականներին միայն Սիրիայից, Լիբանանից, Իրանից, Հունաստանից, Ֆրանսիայից, Բուլղարիայից, Ռումինիայից, Եգիպտոսից, Պաղեստինից, Իրաքից, ԱՄՆ-ից, Չինաստանից Հայկական ԽՍՀ էր ներգաղթել 86.373 հայ: Ներգաղթողների հիմնական մասը բարձր կարգի մտավորականներ, մասնագետներ, զանազան արհեստների տեր եւ, մանավանդ, հայրենասեր եւ հայրենաշեն մարդիք են եղել: Նրանք բոլոր ոլորտներում դրական ավանդ են ունեցել:



Կարելի է առանձնացնել 1946-47 թվականների հայրենադարձության «մեծ ալիքի» հետևյալ դրական հետեւանքները.

1. Առավել ինտենսիվ կերպով ընթացավ երկրի ապաքինումը Երկրորդ աշխարհամարտի պատճառած մարդկային եւ նյութական վնասներից:

2. Որոշակի չափով չեզոքացվեցին պատերազմի ընթացքում հայ ազգի գենոֆոնդին հասցված կորուստները:

3. Հայրենադարձներն իրենց գիտելիքներով նպաստեցին Հայաստանի տնտեսության զարգացմանը:

4. Բնակեցվեցին նոսր բնակչություն ունեցող տարածքներ, խոշոր բնակավայրերի (մասնավորապես, Երեւանի) ընդլայնման ու դրանց արդյունաբերական կենտրոնների վերածման գործընթացն ընդունեց էլ ավելի արագ տեմպեր:

5. Հայրենի հողի վրա հայ մշակույթը հարստացավ սփյուռքահայերի կողմից ներմուծված նոր գծերով եւ դրսեւորումներով, կենցաղն ստացավ նոր նկարագիր:

Հայրենադարձներն իրենց միջոցներով եւ պետության տված վարկի օգնությամբ (հետագայում վարկն ամբողջությամբ զեղչվեց) կառուցեցին բնակարաններ մեծ մասամբ քաղաքներում, ապա նաեւ գյուղական բնակավայրերում:

Հայրենադարձությունը շարունակվեց հետագա տարիներին: 50-ական թվականների ընթացքում հայրենադարձների թիվը թեւեւ փոքր ինչ նվազեց, բայց 60-ական թվականներին վերսկսվելու շնորհիվ, տարեկան, միջին հաշվով, հայրենադարձվում էր 3 հազար մարդ:

1920-1988 թվականներին ընդհանուր առմամբ սփյուռքից (ներառյալ Խորհրդային Միության ոչ հայկական տարածքներից եկածները) Խորհրդային Հայաստան են ներգաղթել շուրջ 225-230 հազար հայեր: Եթե չլինէր սառը պատերազմի ներգործությունն ու Ստալինի կողմից հայրենադարձված հայերի մի մասի աքսորն Ալթայի երկրամաս, անկասկած, հայրենադարձվողների թիվը կլինէր շատ ավելի մեծ:

Անհրաժեշտ է շեշտել, որ 1919-1940 թվականների, ինչպես նաեւ 1945-49ի եւ հետագա շրջանի ներգաղթի կազմակերպման աշխատանքները շատ ավելի դյուրին էին, այն իմաստով, որ հիշյալ ժամանակահատվածում հայրենիք վերադառնալ փափագողների մեծ մասի համար սեփական գոյատեւման խնդիրն էր լուծում ստանում, եւ ոչ մի-



այն՝ հայրենիք վերադառնալու զուտ հոգեբանական-բարոյական ներքին մղումը: Շատերը չէին հասցրել օտարության մեջ սովորել տվյալ երկրի լեզուն եւ ձգտում էին նվազագույնի հասցնել շփումներն օտար միջավայրի հետ՝ ինքնամեկուսացման հայավաններ ստեղծելով:

1991 թվականին Խորհրդային Միության փլուզումից հետո, արտագաղթի հուժկու ալիքին զուգընթաց, սկզբնավորվեց հայրենադարձության հանդիպակաց ալիք: Այս ալիքը, թեեւ անհամեմատ թույլ է, ունի անկազմակերպ բնույթ եւ գրեթե չի քաջալերվում ոչ իշխանությունների, եւ ոչ էլ սփյուռքի եւ հայրենի հանրային կարծիքի կողմից, սակայն, այն խոստումնալից է եւ ունի իր թափը գորացնելու մեծ ներուժ:

Այսօր, կարելի է պայմանականորեն առանձնացնել հայրենադարձվողների երեք հիմնական խմբեր.

1. Իրանահայություն:

2. Արեւմտյան երկրներից հայկական եւ միջազգային կազմակերպությունների հայաստանյան ներկայացչություններ եւ մասնաճյուղեր գործուղված հայ մասնագետներ:

3. Մերձավոր Արեւելքի երկրներից ուղղակի տեղափոխվող կամ որոշ ժամանակ արեւմտյան երկրներում հաստատված ու հիասթափված անձինք, որոնք մեջ մեծ թիվ են կազմում երիտասարդ ընտանիքները կամ Հայաստանում ամուսնացած երիտասարդները:

**Հստակ է՝ հայրենադարձությունը հայ իրականությունից այլեւս արմատախիլ չարվող երեւույթ է: Ուստի, հարկավոր է մտածել այդ գործընթացը հունավորելու մասին:**



## Հայրենադարձության Ռեսուրսները

Որպեսզի հնարավոր լինի ճիշտ գնահատել հայրենադարձության հեռանկարները, պետք է հստակ պատկերացում կազմել, թե որոնք են հայրենադարձության ռեսուրսները՝ այսինքն արտերկրում բնակվող հայության այն զանգվածները, որոնք, անշուշտ, համապատասխան միջոցառումների իրականացման դեպքում, պատրաստ կլինեն հայրենադարձվելու: Յուրաքանչյուր խմբի եւ ենթախմբի նկատմամբ անհրաժեշտ է դրսեւորել տարբերակված մոտեցում: Առավել եւս՝ պետք է տարբերակել ավանդական սփյուռքը, որի հիմքն է կազմում Մեծ եղեռնից մազապուրծ եղած հայությունը եւ հետխորհրդային ժամանակաշրջանի արտագաղթի հետեւանքով առաջացած այսպես կոչված՝ «նոր սփյուռքը»:

### 1. Մերձավոր Արեւելքի երկրների հայ գաղութներ:

Ներկայումս Մերձավոր եւ Միջին Արեւելքը «վերակազմակերպելու» Արեւմուտքի կողմից տարվող քաղաքականության հետեւանքով, տարածաշրջանը մտել է քաղաքական անկայունության փուլ, որն էլ ավելի սրվելու միտում ունի: Քաղաքացիական պատերազմի շեմին է կանգնած Իրաքը, բացահայտ են ԱՄՆ-ի սպառնալիքները Սիրիայի նկատմամբ, Լիբանանն աստիճանաբար վերածվում է հիմնականում մահմեդական երկրի: Նշված երեք երկրներն էլ ունեն հոծ հայ բնակչություն, որի մի մասը համապատասխան հետաքրքրության եւ աջակցության դրսեւորման դեպքում, կարող է հայրենադարձվել:

### 2. Իրան

Թեեւ Իրանը Հայաստանի հարեւանն ու դաշնակիցն է եւ նրա կողմից իրականացվող ներքին քաղաքականությունն ընդհանուր գծերով երաշխավորում է երկրում բնակվող հայության ազգային-կրոնական եւ մշակութային ինքնությունը, սակայն երկրի ապագա կացությունն անորոշ է: Մասնավորապես, առկա է ամերիկա-իրանյան փոխհարաբերությունների աստիճանաբար աճող լարվածություն, որը կարող է



նաեւ վերածվել ռազմական ընդհարման:

Դա հարկադրում է Իրանում բնակվող մեր հայրենակիցներին ձգտել ապահովագրելու իրենց ապագան, այդ թվում՝ բնակարաններ գնելով Յայաստանում, մեծ մասամբ՝ մայրաքաղաքում: Միայն մեր պետության քայլերից է կախված այն, թե՛, արդյո՞ք, իրանահայերը կօգտագործեն Յայաստանը որպես ցատկահարթակ Արեւմուտք գաղթելու համար, թե՛ նրան կվերաբերվեն որպես մի երկրի, որը պիտանի է մշտապես ապրելու համար:

### **3. Եվրոպա եւ Ամերիկյան մայրցամաք**

Ներկայումս, ըստ ընդունված հաշվարկների, Կենտրոնական ու Արեւմտյան Եվրոպայի երկրներում եւ Ամերիկյան մայրցամաքում բնակվում է ավելի քան մեկ ու կես միլիոն հայ, այդ թվում՝ շուրջ մեկ միլիոն՝ միայն ԱՄՆ-ում:

13-18-րդ դարերի ընթացքում Կենտրոնական Եվրոպայի երկրներում (Ռումինիա, Լեհաստան, Յունգարիա, Չեխիա) ձեւավորված հայ գաղութների բազմահազար բնակչությունը ներկայումս ամբողջովին ձուլված է: Նույն ճակատագիրն է սպասում նաեւ ԱՄՆ-ի եւ Արեւմտյան Եվրոպայի գաղութների հայության այն խմբին, որը կազմում են 20-րդ դարի Մեծ Եղեռնից մազապուրծ եղած զանգվածներն ու նրանց սերունդները, ինչպես նաեւ մինչեւ 1970-ական թվականներ արեւելյան սփյուռքից արտագաղթածները, որոնք արդեն մեծամասամբ ձուլվել են եւ հայ են միայն անվանապես:

Սակայն, 1960-70-ական թվականներին Արեւելքի երկրներից (Լիբանան, Սիրիա, Եգիպտոս, Թուրքիա, Իրաք եւ Իրան) դեպի արեւմուտք՝ Յյուսիսային Ամերիկա աշխարհամաս եւ Արեւմտյան Եվրոպա գաղթած եւ ներկայումս մեկուսացած ու կենտրոնացված գաղութներում ապրող հայության մեջ գոյություն ունի միջին կամ բարձր կարողությունների տեր հայության մի փոքրաթիվ զանգված, որը դրականորեն է տրամադրված հայրենիք վերադառնալու գաղափարի նկատմամբ: Անկախությունից հետո Յայաստանը լքած եւ ԱՄՆ-ում հաստատված երիտասարդ ընտանիքներից շատերը նույնպես կվերադառնան հայրենիք, եթե Յայաստանում գործեն հայրենադարձությունը խրախուսող օրենքներ եւ ստեղծվեն համապատասխան պայմաններ:



#### **4. Ռուսաստան եւ ԱՊՀ երկրներ**

Ներկայումս Ռուսաստանում եւ ԱՊՀ երկրներում տարբեր հաշվարկներով ապրում է ավելի քան 3 միլիոն հայ: Այդ գաղթական հայության զգալի մասը Հայաստանից հեռացել է վերջին երկու տասնամյակներում: Ինչպես եւ Եվրոպայի ու Ամերիկյան մայրցամաքի պարագայում, այս երկրներ գաղթած ազգաբնակչությունն արագ տեմպերով ձուլվում է՝ յուրացնելով տեղի բարքերը, լեզուն ու մշակույթը:

Միաժամանակ, ի տարբերություն արեւմտյան երկրներում ապաստանած հայության, ԱՊՀ երկրների եւ, մասնավորապես Ռուսաստանի հայ բնակչության մեծ մասը տեղացիների կողմից ենթարկվում է ինչ-ինչ հալածանքների իր «կովկասյան» պատկանելության համար: Դավկայում է այն մասին, որ գոյություն ունի նշված տարածքներից հայրենադարձվելու պատրաստ մեծ զանգված: Չպետք է մոռանալ, որ այդ զանգվածն իր կապերը հայրենիքի հետ դեռ լիովին չի կտրել: Սակայն, Ռուսաստանյան իշխանությունների կողմից հայերին տրվող վարչական դյուրությունները՝ մեկ կողմից եւ Ռուսաստանի բնակչության որոշակի հատվածի մոտ առկա թշնամական տրամադրությունները՝ մյուս կողմից, արագացնում են հայության ձուլվելու միտումները:



## **Հայրենադարձությունը երկքաղաքացիության համատեքստում**

**2005** թվականի նոյեմբերի 27-ին ընդունվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու նախագիծը: Նոր Սահմանադրության մեջ ամրագրված է երկքաղաքացիությունը թույլատրող դրույթ: Այն հարցը, թե ո՞ւմ եւ ո՞ր դեպքերում կարելի է երկքաղաքացիության սկզբունքով ՀՀ քաղաքացիություն շնորհել դեռեւս քննարկման փուլում է:

Գտնում ենք, որ երկքաղաքացիության իրավունքից պետք է օգտվեն մի՛միայն Հայրենադարձի կարգավիճակ ունեցող անձինք: Դա թույլ կտա չեզոքացնելու այն արդարացի առարկությունները, որոնք բերվում են երկքաղաքացիության սկզբունքի դեմ տարբեր քաղաքական հոսանքներին պատկանող ճամբարներից:

Մասնավորապես՝

1. Կբացառվի ՀՀ ընտրությունների արդյունքների վրա հայկական հոծ գաղութներ ունեցող պետությունների հնարավոր բացասական ազդեցությունը՝ հետեւաբար կվերացվի այն հնարավոր վտանգը, որը սպառնում է ՀՀ պետական անվտանգությանը:

2. Կբացառվի զինծառայությունից խուսափելու վտանգը:

3. Էապես կխրախուսվեն ներդրումները ՀՀ տնտեսության մեջ՝ չսահմանափակվելով քաղաքացիություն ստանալու առնչությամբ կատարած միանվագ վճարներով:

4. Կնվազեն դեռեւս Հայաստանում բնակվող հայերի երկքաղաքացիության օրենքի կիրառմամբ արտագաղթի դիմելու հնարավորությունները:

5. Կբացառվի ՀՀ-ում մշտապես բնակվողների կողմից իրենց որպես երկրորդ կարգի քաղաքացի համարելու հնարավոր զգացումը եւ դրա արդյունքում անարդարության զգացմունքի առաջացումը:



6. Էապես կնվազի ՀՀ պետական անվտանգությանը սպառնալիք ներկայացնող տարբեր կարգի անձանց (գործակալներ, հանցագործներ, անբուժելի վարակիչ հիվանդություններ ունեցող անձիք եւ այլք) ՀՀ քաղաքացիության շնորհումը:

7. Կբացառվի տնտեսական կամ քաղաքական դրդապատճառներով երկքաղաքացիության կիրառման մենաշնորհայնացումը:

Հայրենադարձության հիմքի վրա քաղաքացիության ստացումն, ի տարբերություն, ինչ-ինչ չափանիշների հիման վրա երկքաղաքացիության սկզբունքով ՀՀ քաղաքացիության շնորհման, առավել ՎԵՐԱՅՍԿՎՈՂ, ԿԵՆՏՐՈՆԱՑՎՈՂ ԵՎ ՀԱՄԱԴՐՎՈՂ գործընթաց է: Հետեւաբար, միայն այդ միջոցով կարելի է գերծ մնալ վերը թվարկված վտանգներից:



**Ե.**

## **Հայրենադարձության Միջազգային Փորձի Մասին**

**Ն**երկայումս մի շարք երկրներ, որոնք ընդհանուր ներգաղթային քաղաքականության հետ մեկտեղ իրականացնում են հայրենադարձություն կամ էթնիկական ներգաղթ՝ կանոնակարգում են այն համապատասխան օրենքներով եւ ենթաօրենսդրական ակտերով:

Նման երկրներից են Իսրայելը, Լեհաստանը, Հունաստանը, Գերմանիան, Ֆինլանդիան եւ այլն: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ Ղազախստանը եւ Մերձբալթյան հանրապետությունները եւս որոշեցին խրախուսել էթնիկական ներգաղթը եւ ընդունեցին համապատասխան օրենքներ հայրենադարձության վերաբերյալ:

Հայրենադարձության քաղաքականություն իրականացնող երկրների մեծամասնությունը գտնում է, որ իրենք բարոյական պարտավորություն ունեն ընդունելու պատմական հայրենիք վերադառնալ ցանկացող իրենց արյունակից եղբայրներին:

Քանի որ ներկայումս Իսրայելն ու Գերմանիան այն երկու հիմնական երկրներն են, որոնց կողմից իրականացվող հայրենադարձության քաղաքականությունն ունի շարունակական բնույթ, հարկ ենք համարում առավել մանրամասնորեն անդրադառնալու նրանց փորձին:

### **Իսրայել**

Հայրենադարձությունն Իսրայել եւ հայրենիքում նորեկների համարկումն այն բնորոշ դեպքն է, երբ ներգաղթի քաղաքականությունն ուղղակիորեն կապված է երկրի առջեւ ծառայած քաղաքական խնդիրների լուծման հետ: Բուն Իսրայել պետությունը հիմնադրվել է 1948 թվականին հրեա ժողովրդի համար հայրենիք ստեղծելու նպատակով: Հրեաների հայրենադարձությունն Իսրայել պետության գոյության եւ անվտանգության գլխավոր հիմքերից մեկն է, ուստի հայրենադարձության եւ հայրենադարձների համարկման գործընթացը երկրի քաղաքականության կարեւորագույն բաղադրիչներից է:



Ընդհանուր առմամբ, Իսրայել պետության գոյության 57 տարիներին հայրենադարձվել է շուրջ 3.000.000 մարդ: Մեր ժամանակներում արդեն ամեն տարի երկիր է հայրենադարձվում միջին հաշվով 50.000 մարդ:

Ըստ 1950 թվականին ընդունված եւ 1970 թվական լրացված Իսրայելի «Վերադարձի մասին» օրենքի՝ հայրենադարձվել կամ Իսրայելի քաղաքացիություն կարող է ստանալ յուրաքանչյուր ոք, ով ապացուցում է (կամ՝ հռչակում) իր պատկանելությունը հրեա էթնոսին կամ հուդայական կրոնին:

Հայրենադարձների համարկման համակարգի ղեկավարումը եւ այդ ոլորտում քաղաքականության մշակումն ու իրականացումը դրված է ներգաղթողների կլանման (աբսորբցիայի) նախարարության եւ Հրեական գործակալության վրա: Վերջինս պատասխանատու է հայրենադարձի Իսրայել տեղափոխման ողջ գործընթացի կազմակերպման, համապատասխան իրավական խորհրդատվության տրամադրման, ինչպես նաեւ առաջնային օգնության ցուցաբերման ծրագրերի իրականացման համար: Աբսորբցիայի նախարարությունը պատասխանատու է հայրենադարձների աբսորբցիայի եւ համարկման ծրագրերի մշակման համար: Մասնավորապես, նախարարությունն օժանդակում է կացարանի ձեռքբերման, կրթության ստացման, աշխատանքի տեղավորման հարցերում, հունավորում է ընդհանուր եւ տեղական կառավարման մակարդակներում պետական հաստատությունների կողմից հայրենադարձներին տրամադրվող օժանդակությունը, մշակում է օժանդակության ծրագրերի ընթացակարգը, որոշում է ծրագրերի ընդհանուր բյուջեն:

Իսրայելը չունի սահմանադրություն եւ «Վերադարձի օրենքը» որոշ քաղաքական վերլուծաբանների կողմից համարվում է Իսրայել պետության սահմանադրությունը:

### **Գերմանիա**

Գերմանիան ընդունել է մի շարք հատուկ օրենքներ, որոնք կանոնակարգում են գերմանական ծագում ունեցող անձանց հայրենադարձությունը:

Այսպես, 1980-1991 թվականներին Գերմանիա է հայրենադարձվել շուրջ 1,6 միլիոն մարդ: 1991 թվականից ի վեր, յուրաքանչյուր տարի



երկիրն ընդունում է 350.000-ից մինչեւ 400.000 գաղթյալ, որոնց գերակշռող մասը հայցում է քաղաքացիություն՝ որպես հիմք նշելով էթնիկական ծագումը:

Հայրենադարձների համարկման հարցերով անմիջականորեն զբաղվում է Ներքին գործերի նախարարությունը: Պետությունը խրախուսում է բարեգործական եւ այլ կազմակերպություններին, որոնք օժանդակում են այդ գործում:

**Վերը բերված օրինակները վկայում են, որ հայրենադարձությունը հատուկ չէ միայն Հայաստանին: Այն իրականացնում են աշխարհի մի շարք, այդ թվում եվրոպական, ընդամին՝ տասնյակ միլիոնավոր քաղաքացիներ ունեցող, երկրներ: Հայրենադարձության իրականացման ընթացքում կուտակվել է հարուստ փորձ, որը կարելի է ու պետք է խորապես ուսումնասիրել եւ տեղայնացնել հայկական ու հայաստանյան իրականության պայմաններին համապատասխան:**



## 2.

### **Օրենսդրությամբ Կարգավորվող Հայրենադարձության Կազմակերպման Հիմնական Սկզբունքները**

#### **1. Հայրենադարձության ծրագիրը որպես պետական և համազգային ծրագիր**

Հայահավաքի, զանգվածային հայրենադարձության համազգային ծրագրի մշակումը ծավալուն խնդիր է: Նման ծրագիրը կարող է ստեղծվել ու իրագործվել ամբողջ ազգի ուժերով և լինել համազգային պահանջի արգասիք: Սակայն գլխավոր գործող «անձը» տվյալ հարցում կարող է, պարտավոր է, հարկադրված է լինելու հայկական պետականությունը: Եթե զանգվածային հայրենադարձությունը ծրագրավորվում, կազմակերպվում է մեծամասամբ պետության կողմից, ապա միայն այդ դեպքում երաշխիք կա, որ այն կիրականանա: Հասարակական կազմակերպությունները, որքան էլ որ դրանք զորեղ լինեն, առանձին անհատները, որքան էլ որ նրանք նվիրված կամ հարուստ լինեն, ի վիճակի չեն՝ ինքնուրույնաբար իրականացնելու մի գործ, որն ի գորու է անելու պետական կազմակերպված մեքենան:

Այլ բան է նման ծրագրի ստեղծման ու իրականացման գործին օժանդակելու անհրաժեշտությունը: Դրանում, հարկ է, որ ներգրավված լինեն հայկական բոլոր շահագրգիռ հասարակական կազմակերպությունները՝ երկրում ու արտերկրում, ինչպես նաև հնարավորինս մեծ թվով անհատ հայորդիներ:

#### **2. Հայրենադարձությունը որպես Հայաստանի Հանրապետությունը որակյալ մասնագետներով համալրելու միջոց**

Խորհրդային Միության փլուզումից հետո սկիզբ առած արտագաղթն աղետալի հետեւանքներ ունեցավ նամանավանդ այն պատճառով, որ Հայաստանից հեռացողների շարքում մեծ թիվ էին կազմում բարձորակ մասնագետները, որոնց նորանկախ հանրապետությունն



այլևս հնարավորություն չունենալու անհավանական հրեհն ունակություններին համապատասխան աշխատանքով ու աշխատավարձով:

Ներկայումս, իր առջեւ ծառայած մարտահրավերներին հաջողությամբ դիմագրավելու համար, Հայաստանը հարկավոր է համալրել կրթված, ազնիվ, հայրենասեր, ազգային շահերով առաջնորդվող մասնագիտական կադրերով:

Սփյուռքը լիովին ի վիճակի է հայրենիք գործուղել մասնագետների, որոնք հիմնավորվելով երկրում՝ կլծվեն երկրի բարեկարգման ամենօրյա աշխատանքներին, կմիավորվեն հայրենի ազգային առողջ ուժերի հետ: Ընդ որում՝ այդպիսի հարյուրավոր անհատներ արդեն իսկ կան, բայց նրանք դեռ շոշափելի թիվ չեն կազմում եւ նրանց կեցությունը հայրենիքում չի կանոնակարգվում:

Սփյուռքահայ մասնագետներից շատերը կարող են մեծ ավանդ ունենալ Հայաստանում քաղաքական, տնտեսական ու մտավոր առաջընթացին՝ կազմելով 21-րդ դարում հայոց պետական եւ ազգային պահանջներին համապատասխանող հայ ազգային ընտրախավի մաս: Հայրենադարձության մասին օրենքը թույլ կտա սփյուռքահայ որակյալ մասնագետներին վճռական ընտրություն անել՝ կողմնորոշելով իրենց կյանքը հայրենիքի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքին կապելու գործում:

Հանրահայտ է Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից ծովային ելքից զուրկ Հայաստանի նկատմամբ, արդեն մեկ ու կես տասնամյակ, իրագործվող աշխարհից մեկուսացնելու եւ խեղդամահ անելու քաղաքականությունը: Այս չարիքին Հայաստանը դիմակայում է մեծ չափով հայկական սփյուռքի շնորհիվ: Պատկերավոր ասած՝ սփյուռքը Հայաստանին ծառայում է որպես «ծովային դարպաս»: Բոլոր բնագավառներում՝ առևտրական, մանր արդյունաբերության, հանրակրթական, առողջապահական, մշակութային, մարզական, զբոսաշրջության, ամենուրե՛ք, զգացվում է սփյուռքահայության մասնակցությունը: Սակայն, փորձը ցույց է տալիս, որ Հայաստանը հզորացնելու սփյուռքյան առաքելությանը մասնակցում է սփյուռքահայության փոքր հատվածը: Եւ ո՛չ անպայման մասնագիտական տեսակետից ամենալավագույնը: Հայրենադարձության «Դեպի Արարատ» ազգային ծրագիրը թույլ կտա վերացնելու այդ բացը՝ ընդլայնելով սփյուռքի ավանդը Հայաստանի շենացման գործում:



### **3. Հայրենադարձության ծրագրի մեկնարկի նախնական հանգրվանները**

Հայրենադարձության ծրագիրը ոչ կարճաժամկետ, ոչ միջնաժամկետ, ոչ էլ անգամ երկարաժամկետ (20-25 տարի) ժամանակաշրջան է, որ պետք է ընդգրկի: Այն մնայուն, տեւական ծրագիր կարող է լինել, իսկ բուն հայրենադարձության կազմակերպումը՝ հայկական պետականության նույնքան մնայուն գործառույթ:

Ամեն դեպքում, չպետք է լինի չհամակարգված կամ չվերահսկվող հայրենադարձության ալիք: Դեպի հայրենիք շարժումը պետք է ծավալվի աստիճանաբար, պետական եւ սփյուռքյան համապատասխան կառույցների զարգացման եւ ծրագրի գործնական հասունացման աստիճաններին համապատասխան:

Ուստի, «Դեպի Արարատ» հայրենադարձության ծրագրի մեկնարկից հետո, ե՛լ այն կանոնակարգող օրենքը կամ օրենքները, ե՛լ հայրենադարձության գործընթացը կազմակերպող կառույցները, ենթակա են լինելու շարունակական վերակազմավորման եւ բարելավման:

Ներկայումս, համոզված ենք, հնարավոր է ստեղծել հայրենադարձության ծրագրի շատ ընդհանուր եւ մեծապես թերի ուրվագիծ միայն: Ուրվագիծ, որը հետագա մշակումների, հարստացման, առավել հիմնավոր, առավել մանրամասն ձեւակերպումների կարիք է ունենալու:

Հայրենադարձության ծրագրի ստեղծման ու իրագործման առաջին, ելակետային քայլն, անտարակույս, հայրենադարձության վերաբերյալ համապատասխան օրենսդրության ընդունումն է: Հայրենադարձության կազմակերպման հետագա հաջողությունները կամ ձախողումները մեծապես կախված են լինելու ընդունվելիք համապատասխան օրենքի կամ օրենքների որակից:



Օրենքի մեջ պետք է սահմանված լինեն ինչպես հայրենադարձության համար պատասխանատու պետական մարմինները, նրանց աշխատանքի կերպը, այդպես էլ հայրենադարձության ֆինանսավորման աղբյուրները: Օրենքի մեջ պետք է հատկացվեն հայրենադարձի իրավունքները, պարտականությունները, քաղաքացիություն ստանալու կարգը եւ հարակից ու համանման այլ հարցերը:

Հայրենադարձության օրենքի ընդունումը, սակայն, հայրենադարձության կազմակերպման առաջին քայլն է. առավել կարեւոր է իրական գործընթաց սկսելը: Հայրենադարձության իրական գործընթացի սկիզբը կարող է ու հարկ է, որ ինչպես հայրենիքում, այդպես էլ սփյուռքում նախապատրաստական փուլ անցնի: Այս հարցում աննախադեպ կարեւորվում է տեղեկատվության դերը:

Հայրենադարձվել ցանկացողն, ընդհանրապես սփյուռքում ապրող հայ մարդը, ճիշտ որոշում կայացնելու համար, նախապես պետք է քաջատեղյակ լինի հայրենիքում գոյություն ունեցող հասարակական, տնտեսական, ընկերային պայմանների, տեղեկություններ ունենա մանավանդ այն բնակավայրի վերաբերյալ, ուր, հնարավոր է, որ ներգաղթելուց հետո բնակվի ինքը: Մասնավորապես, նա ծանոթ պետք է լինի այն ոլորտների վիճակին, ուր, բացառված չէ, ավելի ճիշտ՝ ենթադրվում է, որ աշխատելու է հայրենադարձվելուց հետո:

Այս ամենն ի նկատի առնելով, պետք է որ նախապես ստեղծվի հայրենադարձության պետական մարմինն առընթեր տեղեկատվական կենտրոն, որը զանազան եղանակներով ու ուղիներով հիմնավոր տեղեկատվություն տարածի արտերկրի շահագրգիռ հայրենակիցների շրջանում եւ, միաժամանակ, իր տեղեկատվական բանկում հավաքի նրանց տվյալները: Այն նաեւ հայրենադարձվելու օգտին քարոզչություն տանող կենտրոն պետք է լինի:

Հայաստանյան ու հայկական բոլոր տիպի լրատվամիջոցները խոշոր անելիք ունեն այս առումով եւ նրանց ներգրավումը սկսվելիք գործընթացում իր արդյունքներն է ունենալու:

Հայրենադարձության մասին օրենքի ընդունումից եւ զանգվածային տեղեկատվության գործընթացի կազմակերպումից հետո միայն, կարելի է սկսել հայրենադարձության օրինակարգված ծրագրի իրականացումը:



#### **4- Հայրենադարձության ձեռն ու տեսակները**

Ելնելով սիյուուքում եւ հայրենիքում առկա կացութիւնից, կարելի է առանձնացնել հայրենադարձության հիմնական երեք ձեւ.

##### **Ձեւ Ա.**

Հայրենադարձներ, որոնք իրենք են վճարում իրենց փոխադրման, իրենց բեռի տեղափոխման եւ բնակարանի գնման համար: Ձեւ Ա-յով հայրենադարձվող անձինք կարող են ընտրել Հայաստանի Հանրապետության ներսում իրենց բնակության վայրն, ըստ իրենց հայեցողության: Նրանք նաեւ ապահովված են աշխատանքով՝ տեր են պահանջարկ ունեցող մասնագիտության կամ ի վիճակի են սկսելու սեփական գործ, այսինքն, կարող են ինքնուրույն ոտքի կանգնել, ավելին՝ անմիջապէս գործուն կերպով մասնակցություն բերել երկրի զարգացմանը:

##### **Ձեւ Բ.**

Հայրենադարձվելու ցանկություն ունեցող անձինք, որոնք ի վիճակի չեն ինքնուրույնաբար հոգալու իրենց անձի եւ (կամ) բեռի տեղափոխման ծախսն, ինչպէս նաեւ Հայաստանում բնակարանի ձեռքբերման ծախսերը: Այս ձեւով ներգաղթող անձանց եւ նրանց ընտանիքի անդամների տեղափոխումը պետք է իրականացվի պետական միջոցներով: Հայաստանի Հանրապետության տարածքում սեփական բնակարան չունեցող անձինք Ձեւ Բ-ով հայրենադարձվելու իրավունք կարող են ստանալ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված բնակավայրերից մեկում բնակարան ստանալու եւ մշտապէս բնակվելու համաձայնություն տալու դեպքում:

##### **Ձեւ Գ.**

Հայաստանում ամբողջ տարին չբնակվող, սակայն այնտեղ բնակարան ունեցող անձինք, ովքեր տարվա որոշ ժամանակն ապրելով Հայաստանի Հանրապետությունում, տնտեսական, մասնագիտական կամ այլ տեսակի ծրագրեր իրականացնելով մասնակցում են երկրի զարգացմանը:



## 5. Հայրենադարձին տրվող արտոնություններ

Անհրաժեշտ է առավելագույն կերպով հեշտացնել հայրենադարձի համար Հայաստան տեղափոխության եւ հիմնավորման գործն, այդ ուղղությամբ սահմանելով մի շարք արտոնություններ հայրենադարձության գործընթացի բոլոր փուլերում, սկսած նրա մուտքի արտոնագիր ստանալու պահից մինչեւ նրա կողմից ՀՀ քաղաքացիություն ձեռք բերումը, եւ, առանձին դեպքերում ու հարցերում՝ ՀՀ քաղաքացի դառնալուց շատ ավելի հետո:

Այսպես, հայրենադարձի մուտքի արտոնագիր ստացած անձը պետք է ազատվի իր եւ իր ընտանիքի անդամների գույքի տեղափոխության համար բոլոր տեսակի մաքսային գանձումներից: Այն դեպքում, եթե հայրենադարձը հնարավորություն չունի ինքնուրույն տեղափոխելու իր անձը, ընտանիքի անդամներին եւ բեռը, Ձեւ Բ պայմանների շրջանակում, իր դիմումի համաձայն, դրանց փոխադրության ծախսերը պետք է հոգա պետությունը:

Հայրենադարձի բնակության վայրը պետք է վճռվի ըստ նրա զբաղմունքի բնույթի: Եթե հայրենադարձվել ցանկացողը հնարավորություն չունի Հայաստանի Հանրապետությունում ինքնուրույն ձեռք բերելու բնակարան, Բ ձեւի պայմանների շրջանակում, նրան պետք է առաջարկվի այն բնակավայրերի ցանկը, որտեղ նրան կարող է հատկացվել անվճար բնակարան:

Հայրենադարձներին տնային գույքի ձեռքբերման, սեփական գործ սկսելու համար վարկերի տրամադրումն, ավելին՝ միանվագ անհատույց հատկացումները, հարկերից որոշակի ժամկետով ազատելը, զանազան այլ արտոնություններ տալը գործի կարելորության տեսակետից հույժ անհրաժեշտ է:

Հայրենադարձների հիմնավորման եւ հասարակության մեջ նրանց համարկման գործի մեջ կարելի է ներգրավել հասարակական կառույցներ՝ ֆինանսավորելով նրանց կողմից առաջարկված ծրագրերն ու միջոցառումները: Չպետք է բացառել նաեւ հայրենադարձության վարկային հիմնադրամի ստեղծման գաղափարը, որը տարբեր կարգի օժանդակություն կցուցաբերի հայրենադարձվող երիտասարդ ընտանիքներին եւ անհատներին:



Հատուկ պետք է քաջալերել սահմանամերձ գյուղերում ու տարածաշրջաններում բնակվող հայրենադարձներին եւ նրանց լրացուցիչ արտոնություններ տալ: Հայրենադարձի կարգավիճակը հատուկ ու հստակ բովանդակություն պետք է ունենա եւ ամենեւին սնամեջ փուչիկ չպետք է հիշեցնի:

## **6. Լեզու եւ դպրոց**

Հայրենադարձության ծրագրում անհրաժեշտ է, որ հաշվի առնվեն նաեւ հայրենադարձվողների առաջ երկրում անխուսափելիորեն ծանախիք լեզվական խնդիրների լուծմանն օժանդակելու հարցերը: Որքան էլ որ Հայաստանը յուրաքանչյուր հայի հայրենիքն է, այնուամենայնիվ, դա վկայում է նաեւ նախորդ ներգաղթի փորձը, այն նոր երկիր է ներգաղթողի համար:

Գլխավոր խնդիր է այստեղ լեզվի հարցը. միշտ չէ եւ բոլոր հայերը չէ, որ տիրապետում են հայերեն լեզվին անհրաժեշտ չափով: Ներգաղթողների խմբերի ու անհատների համար հարկավոր է լինելու կազմակերպել հայերեն լեզվի ուսուցման դասընթացներ: Այս հարցը կարելի է լուծել ինչպես արդեն հայրենիքում, այդպես էլ սփյուռքում՝ Հայաստանի դեսպանատների ու հայկական կազմակերպությունների համատեղ ուժերով:

Խիստ անհրաժեշտ է աշխատանք տանել ընդհանուր ուղղագրության սահմանման ուղղությամբ, որի հիմքում դրված լինեն մաշտոցյան ուղղագրության առավել էական տարրերը:

Առանձնակի ուշադրության է արժանի հայրենադարձների ուսուցման գործը. պետք է նախատեսել պետպատվերի կարգով անվճար տեղերի հատկացումներ բուհերում ու ուսումնական այլ հաստատություններում, այլ արտոնություններ եւ պետական օժանդակություն: Հանրակրթական դպրոցներում պետք է ներդնել հատուկ ծրագիր հայրենադարձների երեխաների համար, որոնք նպատակ կունենան դյուրացնելու նրանց ընտելացումը ՀՀ կրթական համակարգին:

## **7. Հայրենադարձի ՀՀ գինված ուժերում ծառայությունը**

Ինչպես եւ բոլոր ՀՀ քաղաքացիները, հայրենադարձները նույնպես



զինապարտ են: Սակայն, հաշվի առնելով հասարակությանը հարմարվելու նրանց դժվարությունները եւ առանձնահատկությունները, անհրաժեշտ է նրանց համար սահմանել զինծառայության հատուկ կարգ:

Նախկինում ՀՀ քաղաքացիություն չունեցած եւ ՀՀ զինված ուժերում ծառայությունից չխուսափած 27 տարեկանից բարձր հայրենադարձը պետք է ազատվի ՀՀ զինված ուժերում ծառայելու պարտականությունից:

27 տարեկանից ցածր հայրենադարձը պետք է ՀՀ զինված ուժերում ծառայություն անցնի ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սահմանված հատուկ կարգով եւ հատուկ զորամասերում:

## **8. Հայրենադարձության պետական մարմնի հիմնական խնդիրները**

Հայրենադարձության պետական մարմինը լինելու է Հայաստանի Հանրապետության պետական կարելուր մարմիններից մեկը, որն համագործակցելով պետական այլ մարմինների (պաշտպանության նախարարություն, ազգային անվտանգության նախարարություն, ֆինանսների, առողջապահության եւ կրթության նախարարություններ եւ այլն) զբաղվելու է Հայաստանը ցանկացած առումով հզորացնող աշխատանքների կազմակերպմամբ: Հայրենադարձությունը կազմակերպող մարմինը պետք է լինի ճկուն կառույց, որն ի վիճակի է աշխատելու թե՛ երկրից դուրս եւ թե՛ երկրի ներսում:

Հայրենադարձության պետական մարմինը մշտապես ուշադրության կիզակետում պետք է պահի հայրենադարձների խնդիրները, համարկման տնտեսական, ընկերային, մշակութային, լեզվական, հոգեբանական դժվարությունները, օժանդակի այդ խնդիրների լուծմանը: Յուրաքանչյուր հայրենադարձ ընտանիք կամ անձնավորություն տեւական ժամանակ պետք է գտնվի համապատասխան պետական մարմնի խնամատարության ներքո՝ նախքան ՀՀ քաղաքացիություն ստանալն, անգամ դրանից հետո: Նման ուշադրությունն ու օժանդակությունը շատ անհրաժեշտ են գործի հաջողության, այն օրավուր ավելի ծավալուն դարձնելու տեսակետներից:

Յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարությունը պետք է հաստատի



«Չայրենադարձության տարեկան ծրագիր», որտեղ, մասնավորապես, պետք է նշվի այն բնակավայրերի ցանկը, ուր հայրենադարձներին կարող է հատկացվել անվճար բնակարան, բյուջեով ֆինանսավորվող հայրենադարձվող ընտանիքների քանակը եւ դրան համապատասխան գումարները, վարկավորվող ընտանիքների քանակը եւ այլն: Չայրենադարձության պետական ծրագրի մեջ պետք է կարելորդ են արդեն հայրենադարձված անձանց ու ընտանիքների հիմնավորման խնդիրները:

### **9. Սփյուռքի դերակատարությունը հայրենադարձության գործում**

Չայրենադարձության պետական մարմնի աշխատանքի կարելորդ ուղղություններից մեկն է լինելու համագործակցությունը սփյուռքի հայկական կազմակերպությունների հետ: Առանց հայրենադարձության կազմակերպման գործընթացի մեջ դրանց ներգրավմանը ոչ միայն գործը կձախողվի, այլեւ անհնար կլինի այն լուրջ հիմքերի վրա սկսելն անգամ:

ՀՀ արտաքին գործերի նախարարությանը կից գործող սփյուռքահայերից կազմված վերահսկող հանձնաժողովի ստեղծումը լուրջ դեր կարող է խաղալ: Նման մի մարմինը լայն լիազորություններով պետք է օժտված լինի, որպեսզի կարողանա չեզոքացնել հայրենադարձության գործընթացների սահուն իրականացմանն սպառնացող արգելքներն ու վտանգները:

«Հին» սփյուռքից հայրենադարձվողները, որոնք կարիք կունենան արտոնությունների եւ ֆինանսական աջակցության, պետք է առավելապես ֆինանսավորվեն սփյուռքյան ներդրումների հաշվին այնքան ժամանակ, քանի դեռ Չայաստանի Հանրապետությունը եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը չեն կանգնել ընկերային-տնտեսական բնականոն զարգացման ուղու վրա:

### **10. Հայրենադարձություն եւ տարաբնակեցում**

Չայրենադարձության լայնածավալ ծրագրերի իրականացման միջոցով կարելի է ու պետք է կտրուկ փոխել երկրի տարաբնակեցման համակարգի արդի անբարենպաստ նկարագիրը: Խոսքն առաջին հեր-



թին ռազմավարական տարածքների բնակեցման մասին է:

Ցանկալի է արտերկրից ներգաղթող համայնքների բնակեցումը համախումբ (կոմպակտ) ձեռով սահմանամերձ եւ նոսր բնակեցված տարածքներում: Դա կնպաստի թե՛ նրանց անդամների դյուրին հարմարկմանը նոր պայմաններին, թե՛ բնակավայրերի կայունությանն ու արագ վերելքին բոլոր առումներով:

Չպետք է խրախուսվի Հայաստանի հարակից (հայկական) տարածքներից ներգաղթը:

«ԴԵՊԻ ԱՐԱՐԱՏ» հայրենադարձության ծրագիրը կարելի է համարկել երկրի տարածաշրջանային զարգացման ծրագրերին, օրինակ աղետի գոտու վերականգնման ծրագրերին եւ այլն:

### **11. Հայրենադարձության ազգային ծրագրի ֆինանսավորման խնդիրները**

Չանգվածային հայրենադարձության իրականացումը ենթադրում է ֆինանսական խոշոր միջոցներ՝ հայրենադարձների համար բնակարաններ եւ գույք ձեռք բերելու, վարկեր տրամադրելու, նրանց հայրենիք տեղափոխելու, հայրենադարձության պետական մարմնի գործառնության եւ այլ կարիքների համար: Այդ միջոցները, առաջին հերթին, պետք է գոյանան պետական բյուջեի հատկացումների հաշվին: Ընդսմին, պետությունը պետք է պարտավորություն ստանձնի ոչ միայն հայրենադարձություն կազմակերպելու, այլեւ այն անընդհատ ավելի խոշոր ծավալներով իրագործելու վերաբերյալ: Հետեւաբար, պետք է յուրաքանչյուր տարի ավելացվեն հայրենադարձությանը հատկացվելիք գումարները, գտնվեն նոր աղբյուրներ եւ, ինչը նույնքան կարեւոր է՝ վերահսկվեն դրանց նպատակասլաց ծախսումն ու հանրությանը ներկայացվեն կատարված աշխատանքները:

Արդեն ասվեց, որ սփյուռքյան ներդրումներն հայրենադարձության կազմակերպման գործում պետք է լինեն հիմնական: Սփյուռքի յուրաքանչյուր համայնք կարող է ունենալ հայրենադարձության իր ծրագիրը՝ անմիջականորեն մասնակցելով ոչ միայն դրա ֆինանսավորմանն, այլ նաեւ իրականացմանը, նամանավանդ այն դեպքերում, երբ հարցը կվերաբերվի տվյալ համայնքից ներգաղթ կազմակերպելուն:



Անհրաժեշտ է սփյուռքին որպես սոսկ «կթան կով»՝ հեռավոր եւ գթառատ բարեկամ չդիտարկել (ինչպես մեծամասամբ արվում է այժմ), այլ ժողովրդի անբաղադրելի մաս, մասնակից դարձնել նրան վերականգնվող Հայրենիքի բոլոր ծրագրերին:



# Է.

## **Հայրենադարձության Ազգային Ծրագրին Սպառնացող Խոչընդոտները**

**Հ**այրենադարձության կանոնակարգումը եւ, նամանավանդ, իրականացումն, անխուսափելիորեն, հանդիպելու են մի շարք խոչընդոտների: Առկա են առարկայական եւ ենթակայական գործոններ, որոնք էապես դժվարացնելու են գործընթացը: Այդպիսիք երեւան են գալու նաեւ հետագայում:

Անշուշտ, այնպիսի բարդ գործընթացն, ինչպիսին հայրենադարձությունն է, ապահովագրված չի լինելու զանազան դժվարություններից եւ անհաջողություններից. դրանք կլինեն, անկասկած, բոլոր օղակներում եւ փուլերում:

Հայրենադարձությամբ զբաղվող պետական եւ հասարակական մարմիններն անհապաղ պետք է արձագանքեն եւ բոլոր հնարավոր միջոցներով փորձեն լուծում տալ այդ խնդիրներին: Անհրաժեշտ է բացառել առարկայական դժվարությունների շահարկումները եւ հնարավորինս նվազեցնել ենթակայական գործոնների բացասական ազդեցությունը հայրենադարձության գործընթացի վրա:

### **ա) Առարկայական գործոններ**

Հիմնական առարկայական գործոնը Հայաստանի Հանրապետության ծանր ընկերային-տնտեսական կացությունն է, դրանից բխող միջոցների սղությամբ, գործազրկության բարձր ցուցանիշներով, արտագաղթի դեռեւս շարունակվող տեմպերով, ընդունված բայց չգործող օրենքների ամկայությամբ եւ այլն: Դրանք էապես դժվարացնելու են պետության հնարավորությունները հայրենադարձների համարկման գործում: Սակայն, պետք է գիտակցել, որ հայրենադարձվել ցանկացող հայության հիմնական զանգվածը քաջածանոթ է Հայաս-



տանում տիրող ընկերային-տնտեսական վիճակին եւ, ընդունելով հայրենադարձվելու որոշում, չի առաջնորդվելու սոսկ տնտեսական նկատառումներով, այլ, գլխավորապես, հոգեւոր-գաղափարական մղումներով, առաջնորդվելու է իր հայրենիքում, իր հայրենակիցների հետ արժանավայել ապրելու ցանկությամբ: Դրանից ելնելով հայրենադարձը հայրենադարձվելու սկզբնական շրջանում կարող է համբերությամբ տանել տնտեսական դժվարությունները, անշուշտ, այն դեպքում, եթե զգա պետության հոգատար վերաբերմունքը իր կարիքների նկատմամբ:

Մեկ այլ փաստարկ, որը հաճախ է օգտագործվում հայրենադարձության ընդդիմախոսների կողմից, այն է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է առաջին հերթին լուծի առկա բնակչության առջեւ ծառայած խնդիրները, միջոցներ ձեռնարկի արտագաղթը խոչընդոտելու համար եւ այնուհետեւ միայն զբաղվի աշխարհասփյուռ հայության հայրենադարձությամբ: Սրան կարելի է առարկել, որ արտագաղթի խոչընդոտմանն ուղղված միջոցառումները եւ հայրենադարձության կազմակերպումն այդ հարթության վրա իրար հետ փոխկապակցվող երեւույթներ չեն: Ընդհակառակը, **հայրենադարձությունը խրախուսելու է գործունյա ու, ինչու չէ, նաեւ ունեւոր սփյուռքահայերի մուտքը Հայաստան, թույլ է տալու էապես բարելավելու Հայաստանի ընկերային-տնտեսական կացությունը՝ տնտեսության մեջ ներդրումների ծավալի ավելացման եւ նոր աշխատատեղերի ստեղծման շնորհիվ:** Հայրենադարձության գործընթացը կարող է նաեւ առաջացնել ապագայի նկատմամբ հույսի պոռթկում ժողովրդի տնտեսապես ոչ հաջողակ հատվածի մոտ: Ներգաղթի առկայության դեպքում արտագաղթելու մտադրություն ունեցողը, անկասկած, մի պահ տատանում պիտի ապրի:

### **բ) Ենթակայական գործոններ**

Հայրենադարձության գործընթացի կանոնակարգումն ու մեկնարկը խոչընդոտող ենթակայական գործոններից կարելորագույններն են՝ առանձին քաղաքական-հասարակական խմբակցությունների կողմից նեղ ներկուսակցական շահերից ելնելով հայրենադարձության գաղափարի հնարավոր մենաշնորհայնացումը, միջկուսակցական մրցակ-



ցությունը, անտարբերությունը, ապիկարությունը, կաշառակերությունը: Անդրադառնանք յուրաքանչյուր գործոնին առանձին-առանձին:

Հայաստանում եւ սփյուռքում գործող առանձին քաղաքական-հասարակական խմբակցություններ, առաջնորդվելով իրենց նեղ կուսակցական շահերով, միտում ունեն մենաշնորհայնացնել սփյուռք-Հայաստան համագործակցության գաղափարը եւ գործընթացն, համարելով այն միմիայն իրենց կուսակցության քաղաքական վերահսկողության ոլորտ, եւ խանդով են վերաբերվում այլ հասարակական կամ քաղաքական ծրագրերին:

Հայրենադարձության շուրջ հնարավոր շահարկումները կարող են արտահայտվել նաեւ նրանով, որ առանձին քաղաքական ուժեր կծգտեն հայրենադարձության գաղափարը գործիք դարձնել իրենց քաղաքական հակառակորդներին հարվածելու համար: Սա կարող է ստանալ նաեւ տեղեկատվական պատերազմի բնույթ՝ ինչը հայրենադարձության գաղափարների հանդեպ առաջ կբերի հասարակության լայն զանգվածների հակակրակները:

Մեծ է առանձին քաղաքական ուժերի կողմից հայրենադարձության գաղափարի ամբոխահածո (դեմագոգիկ) շահարկման վտանգը: Ինչպես Հայաստանի ներսում, այնպես էլ սփյուռքում քաղաքական կամ այլ բնույթի շահաբաժին փախցնելու մոլուցքով տոգորված ուժեր կարող են խոստումներ շռայլել, ճառեր արտասանել՝ որեւէ իրական քայլ չձեռնարկելով հայրենադարձության գործընթացի մեկնարկի ուղղությամբ:

Վերը բերված գործոնները, միանշանակորեն, խոչընդոտելու են հայրենադարձությանը՝ առաջացնելով մի շարք վտանգներ: Դրանք են՝ հայրենադարձության համազգային գաղափարի վարկաբեկում, հայրենադարձության գաղափարը մենաշնորհ դարձրած քաղաքական ուժին չպատկանող եւ դրա գաղափարները չբաժանող սփյուռքահայերի Հայաստան մուտք գործելու հնարավորության դժվարացում, հայրենադարձության գաղափարի հանդեպ սփյուռքահայության մոտ հիասթափության առաջացում եւ, այդ ամենի արդյունքում, ի վերջո, գործընթացի փաստական ձախողում:

Մի շարք ենթակայական գործոններ խոչընդոտելու են նաեւ հայրենադարձության իրականացմանն այն կանոնակարգելուց հետո ան-



գամ: Առաջին հերթին դա պետական որոշ պաշտոնյաների ապիկարությունն է, անտարբերությունը, կաշառակերությունը:

Հայաստանի ապագայով մտահոգված հայաստանյան եւ սփյուռքյան հասարակական կազմակերպություններն ու անհատները պետք է լինեն խիստ սթափ եւ ձեռնարկեն բոլոր միջոցները վերը նշված գործոնները չեզոքացնելու կամ դրանց վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար:

Այդ նպատակով անհրաժեշտ է սահմանել հայաստանյան եւ սփյուռքյան հասարակական կազմակերպությունների վերահսկողությունը հայրենադարձության գործընթացի բոլոր օղակներում, պարտադրել հաշվետվությունների ճկուն համակարգ, գումարների ծախսման թափանցիկություն եւ այլն:

Որքան էլ դժվարին թվա, այնուամենայնիվ, խնդիրը լուծելի է: Դրա համար պետությունը պետք է դրսեւորի քաղաքական կամք եւ վճարկանություն:

**Ի վերջո անհրաժեշտ է գիտակցել, որ հայրենադարձության գործընթացն ազգային ծրագրի էական բաղադրիչներից մեկն է, եւ դրա իրականացումը վեր է ամեն ինչից, վեր է բոլոր մասնավոր շահերից: Ուստի, հնարավոր մասնավոր ձախողումները եւ դժվարությունները չպետք է հանգեցնեն գործընթացի դադարեցմանը:**



## Ը.

### **Հայրենադարձության Ազգային Ծրագրի Իրականացման Կոչ**

**Հ**այկական լեռնաշխարհի տարածքը հայ ժողովուրդի բնօրրանն է: Այն հայ ազգի ձեւավորումից ի վեր ընկալվում է որպէս սեփական պատմական հայրենիք: Հայրենի հողի վրա ապրելու եւ արմատավորվելու իրավունքը բոլոր ժամանակներում եղել եւ այսօր էլ մնում է հայ ժողովրդի գոյատեւման հիմնական գրավականը, ազգային եւ պետական բոլոր կառույցներին պարտադրում հետապնդելու ազգահավաքման ծրագրի իրականացում:

Այս պատմական պահին եւս Հայաստանի պետականությունն է, որ իր ուսերին պետք է վերցնի հայության լինել-չլինելու տեսակետից անշրջանցելի հիմնահարցերի լուծումը: Հայահավաքի հիմնահարցը համազգային արմատական հիմնահարց է: Հայաստանի ներկա ու ապագա բոլոր ղեկավարներն, առաջնորդներն ու պատասխանատուները պետք է գիտակցեն, որ Հայկական պետականությունը չի վերականգնվել միայն ներկա Հայաստանի տարածքում ապրող հայերի նախնիների կամ ներկայումս այստեղ ապրողների ուժերով. Հայկական արդի պետականության ամեն մի հիմնաքար թաթախված է հայության բոլոր հատվածների արյուն-քրտինքի մեջ: Այն չի կարող, չպետք է լինի ազգի մեկ երրորդի պետականությունը: Ուստի հայկական արդի պետականությունը պետք է հիմնավորապէս զբաղվի համայն հայության հիմնահարցերի լուծման ուղղությամբ: Դա նրա ազգային-բարոյական պարտքն է ու պարտականությունը:

Պետք է քաջ գիտակցել, որ վաղ թե ուշ հայկական սփյուռքը վերանալու է: Այն արդեն իսկ կիսով չափ սուզված նավի է նման: Այդ «վերացումը» կարող է կատարվել երկու եղանակով. առաջին՝ դիմագրավելով ուժացման օրավուր ահագնացող ալիքներին, սփյուռքն ինքն, իր տխուր հոլովույթի ինչ որ փուլում, այլեւս անկարող կլինի գոյատեւել ու (դրա բացահայտ նշաններն արդեն ակնառու են) եւ դա կլինի սփ-



յուռքի վերացման թուրքերին ցանկալի եղանակը, Հայաստանի Հանրապետությունը լրջորեն տկարացնող եղանակը, երկրորդ՝ իր մարման ժամանակահատվածում կլծվի հայրենիքի հզորացման գործին՝ դրանով իսկ հնարավորինս հետաձգելով իր անհետացումը:

Ինչպես որ ցեղասպանության հետեւանք է Հայաստանի հսկայական տարածքների հայաթափությունը եւ կորուստը, այդպես էլ նրա հետեւանքներից է մեծաքանակ հայկական սփյուռքը: Ցեղասպանության բոլոր հետեւանքների վերացման, այդ նույնն է՝ հայության հետագա բնականոն գոյության համար պայքարն ու աշխատանքը այլոց ուսերի վրա չէ. հայությունն ինքը պետք է ամոքի իրեն հասցված դեռ արյունածոր վերքերը:

Արդ՝ հայահավաքը մեծ չափով կարող է որոշել նաեւ հողահավաքը: Ուստի այժմ իրականացվելիք հայրենադարձությունը, որպես երեւոյթ, իր քաղաքական եւ տնտեսական տարողությամբ, շատ ավելի էական նշանակություն կարող է ունենալ Հայ Ղատի լուծման համար, քան, գուցե, զանազան պետությունների կողմից հայկական ցեղասպանության ընդունման հարցում հնարավոր հաջողությունները:

«ՂԵՊԻ ԱՐԱՐԱՏ» հայրենադարձության ազգային ծրագիրը բնական հակազդեցությունն է Թուրքիայի եւ նրա դաշնակիցների կողմից իրականացվող եւ մեծամասամբ հաջողված Հայաստանի հայաթափության ծրագրին: Որպես այդպիսին, այն սեփական կամ նեղ կազմակերպական շահերից ելնելով ձախողելու փորձերը պարզապես ամբողջացնում են հալածանքների, ցեղասպանության, բռնի իսլամացման կամ վրացացման եւ տնտեսական շրջափակման չարիքների օղակը:

Կարելու է նաեւ գիտակցել, որ Հայաստանում, ապագայի նպատակային պատկերացման երկու՝ «մնալ ու դիմանալ»-թե «գաղթել ու բարգավաճել» տարբերակների միջեւ որոշիչ կարգախոսը «այստեղ հնարավոր է» հարցի պատասխանն է: Ու ինչքան էլ «այո, այստե՛ղ էլ հնարավոր է բարգավաճել» քարոզվի, ներգաղթող հայերի առկայությունն ու նրանց հաջողությունն ամենաէական ապացույցները կարող են լինել վերոնշյալ երկու հարցերին դեմ դիմաց հայտնված հայորդուն «մնալ ու բարգավաճել» համոզմունքին հասցնելու համար:

Ինչ էլ որ այլեւս ասվի, անտարակույս է մի բան՝ հայությունն այս հարցում այլընտրանք չունի: Հայաստանն աշխարհում զարգացած



պետությունների հետ համաչափ բարգավաճ երկիր դառնալու համար ունի միայն մեկ նախապայման, դա հայության աշխարհասփյուռ զանգվածի ազգահավաքն է հայրենի հողում, հայրենադարձության միջոցով: Հետեւաբար, Հայաստանի Հանրապետության իշխանությունները պարտավոր են ստանձնել զանգվածային ներգաղթի, հայրենադարձության ծավալուն ծրագրի, հայահավաքի ծրագրի մշակման եւ իրականացման գործը: Այս գործում պետությանը պետք է օժանդակեն հասարակական բոլոր առողջ ուժերը, հայաստանյան եւ սփյուռքյան հասարակական, ազգային, բարեգործական կազմակերպությունները եւ անհատները, որոնք պետք է միավորվեն հայրենադարձության գաղափարը կյանքի կոչելու նպատակի շուրջ:

